Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ ***http://www.armin.am***

էլ. փոստ՝ ***info@armin.am***

«Պատմական հուշարձանների և կուլտուրական մյուս արժեքների պահպանության նկատմամբ հոգատարությունը Հայկական ՍՍՀ քաղաքացիների պարտքն ու պարտականությունն է»:

(ՀՍՍՀ սահմանադրություն, հոդված 66)

Արուճ (նախկին Թալիշ, XVIII դ. մինչև 1970 թ.) գյուղը Հայաստանի հնագույն բնակավայրերից է: Գտնվում է պատմական Արագածոտն գավառում, Արագած լեռան հարավային ստորոտում (Հայկական ՍՍՀ Աշտարակի շրջան): V դարում հիշատակվում է որպես արքունի զորքերի ձմեռային կայան: VII դարում եղել է Հայաստանի կառավարիչ (661—682 թթ.) Իշխան Գրիգոր Մամիկոնյանի աթոռանիստը: X—XI դդ. վեր է ածվել քաղաք-ավանի:

Արուճը և նրա շրջակայքը հարուստ են պատմաճարտարապետական հուշարձաններով՝ բրոնզեդարյան դամբարաններով, տաճարով, պալատով, բերդով, կարավանատնով, խաչքարերով և այլն:

Արուճի տաճարի տեսքը հարավ-արևելքից



Տեսքը հյուսիս-արևելքից



Ավագ խորան

Արուճի տաճարը վաղ միջնադարյան հայ ճարտարապետության կարևորագույն կոթողներից է: Շինարարական արձանագրության և մատենագրական վկայությունների (Ղևոնդ, Հովհաննես Դրասխանակերտցի, Ստեփաննոս Տարոնացի) համաձայն, VII դարի 60—70-ական թթ. կառուցել են տվել Գրիգոր Մամիկոնյանը և իր կինը՝ Հեղինեն: Պատկանում է «գմբեթավոր դահլիճ» կոչվող վաղ միջնադարի Ղտղեիի ու Դդմաշենի եկեղեցիների տիպին: Մեծ եկեղեցու (17,0×34,6 մ) աղոթասրահի ներսում, երկայնական պատերին կից, զույգ որմնամույթերն իրար կապող կամարների վրա էր բարձրանում այժմ կործանված գմբեթը՝ թմբուկով հանդերձ: Հենարանների այդպիսի տեղաբաշխման շնորհիվ աղոթասրահն ընկալվում է իր միասնական, չմասնատված տարածությամբ, բոլոր տեղերից լավ երևում է ավագ խորանը, որի երկու կողմերում գտնվում են ավանդատներ: Արևելյան ճակատում կան լայն ու խոր երկու որմնախորշեր: Դրանց միջև գտնվող ճակատի ստորին մասում, լուսամուտից ցած, ամփոփված է շինարարական արձանագրությունը: Լուսամուտները պսակված են նախշազարդ կամարներով, ղրոները՝ որմնապունազարդ շքամուտքով, իսկ քիվերը, ինչպես Զվարթնոցում, հյուսվածազարդ են:

Տաճարի պատերը ներսից սվաղված են ու պատած որմնանկարներով (այժմ խիստ վնասված): Ավագ խորանի գըմբեթարդում, մոտ 7 մ բարձրությամբ,

պատկերված է Քրիստոսը, ձախ ձեռքին մագաղաթագալար: Պատվանդանը բաժանված է երկու մասի՝ ականթի տերևների, վարդյակների ու պտուղների (խաղող, նուռ) միահյուսվածքից կազմված զարդագոտով, որը բոլորապատում է ավագ խորանը: Պատվանդանի տակ հիշատակված է նկարչի՝ Ստեփաննոս անունը:

Արուճի տաճարն իր հաղթ ու հանդիսավոր ծավալներով, ճարտարապետական արտահայտիչ ձևերով իշխում է շրջապատի վրա: Կիսավեր վիճակում գտնվող այս հուշարձանը հիմնական վերականգնման (բացի գմբեթից) է ենթարկվել 1949—50-ական թթ.:

Պալատը, որ ըստ մատենագրական աղբյուրների կառուցել է տվել նույն Գրիգոր Մամիկոնյանը, 1948—1951 թթ. կատարած պեղումներով բացվել է տաճարին մոտ, նրա հարավարևելյան կողմում: Վաղ միջնադարում աշխարհիկ

Պալատի պյունազարդ դահլիճի խոյակ

ճարտարապետության այս ուշագրավ հուշարձանախումբը բաղկացած է երկու առանձին շենքերից: Դրանցից մեկը, տաճարի հարավային կողմում, ունեցել է պյունազարդ դահլիճ՝ իր հատակագծով ու մանրամասներով (պյուների խարիսխներ, խոյակներ) նման Դվինի կաթողիկոսարանին: Պահպանվել են պալատի պատերի ստորին մասերը, պյուների խարիսխները, երկու խոյակ:

Մյուս, փոքր-ինչ հարավ արևելք գտնվող շենքը (որի կազմում է նաև միանավ բազիլիկի տիպի մի եկեղեցի) այլ հորինվածք ունի: Նրա ուղղանկյուն դահլիճը թաղածածկ է եղել, հենված չորս մույթերի վրա: Հետագայում, հավանաբար ուշ միջնադարում, արտաքինից ավելացնելով բրգավոր հաստ պատեր և կառուցելով ստորգետնյա առվով լցվող ջրավազան, կիսավեր դարձած շենքն օգտագործվել է պաշտպանական նպատակներով:

Արուճի բերդը (դեռ մասնագիտորեն չի ուսումնասիրված), շենքերի և պա-

Արևելյան ճակատի խորշերից մեկը



Հարավային ճակատի հատված

ռիսկների մնացորդները պահպանվել են գյուղի արևմտյան ծայրամասում:

Կարավանատունը կիսավեր վիճակում պահպանվել է գյուղի հյուսիսային կողմում, Աշտարակ—Թալին խճուղային ճանապարհի եզրին: Պատկանում է միադահլիճ եռանավ կարավանատների տիպին, որպիսիք կառուցվում էին Հայաստանում՝ XIII—XIV դդ.: Վեց զույգ մույթերով դահլիճը (15,0×26,5 մ) բաժանված է եղել կենտրոնական (6,0 մ) և կողքերի (3,6 մ) նավերի ու ծածկված երկթեք կտուրի տակ առնված գլանաձև երեք զուգահեռ թաղերով: Դատելով հյուսիսային պատի մնացորդներից, լայնական պատերը ներսի կողմից ունեին մույթերի քայլերին համապատասխան որմնամույթեր: Դրանց դերը երկայնական ուղղությամբ կատարում էին պահունակները, որոնց վրա նստում էին թաղակիր կամարները: Միջին նավի թաղակիր կամարների համար նույնպիսի պահունակներ ագուցված էին երկայնական կամարների միջև, մույթերից քիչ բարձր:

Կարավանատան արտաքին ճարտարապետությունը լուծված է եղել կառուցվածքին հուսալի անառիկություն հաղորդելու ձգտումով, քանի որ այստեղ ժամանակավորապես հանգրվանող կարավանների վրա ավազակներ էին հարձակվում և թալանում էին: Արտաքին պատերը խուլ էին, անկյուններում ու կենտրոնում կառուցված էին հատակագծում կիսաշրջան բուրգեր, որոնք կառուցվածքին ամրոցի տեսք էին տալիս: Միակ մուտքը, հավանաբար, հարավային կողմից էր, իսկ դահլիճը լուսավորվում էր թաղի գագաթի երդիկների միջոցով:

Պապհանվել է կարավանատան միայն հյուսիսարևելյան անկյունը՝ իր ծածկով հանդերձ, վերականգնվել է 1960-ական թթ.:

Արում: Կարավանատան ավերակները

Խոյակ

ԳՄԴ 63. 3 (2Հ) 6
Հ 863

Հարությունյան Վարազդատ Մարտիրոսի
ԱՐՈՒՉ

Арутюнян Вараздат Мартиросович
АРУЧ
(На армянском языке)
Издательство «Айастан»
Ереван — 1984

Հ $\frac{0505040000}{701\ (01)\ 84}$ պատվեր

© ՀՍՍՀ պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության ընկերություն, 1984

Մասն. խմբագիր՝ **Յու. Ա. Թամանյան**
Խմբագիր՝ **Է. Դ. Շահնազարյան**
Նկարիչ՝ **Օ. Ա. Ասատրյան**
Գեղ. խմբագիր՝ **Ս. Ս. Մկրտչյան**
Տեխ. խմբագիր՝ **Կ. Գ. Սարգսյան**
Վերստուգող սրբագրիչ՝ **Լ. Ս. Սահակյան**

ИБ—2/Կ
Հանձնված է շարվածքի 3. 09. 1984 թ.:
Ստորագրված է տպագրության 19. 12. 1984 թ.:
Ֆորմատ՝ 70×108[1]/32: Թուղթ՝ «Կավճապատ» 0,35 պայմ. տպ. մամ., հրատ՝ 0,38 մամ.: Պատվեր՝ 2499: Վֆ 09511:
Տպաքանակ 10000: Գինը 10 կոպ.:
«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91:
Издательство «Айастан», Ереван-9, ул. Теряна, 91.
ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան, Ալավերդյան 65:
Типография № 1 Госкомитета Арм. ССР по делам издательств, полиграфии и книжной торговли. Ереван, ул. Алавердяна, 65.